«ԵՐԵՎԱՆԻ ԳԱԳԻԿ ՍՏԵՓԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ № 135

ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ

ՊԱՐՏԱԴԻՐ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ

ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ

ԱՎԱՐՏԱԿԱՆ

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Թեմա՝	Անվտանգ կենսագործունեության ուսուցումը հանրակրթական ուսումնական հաստատություններում, դպրոցներին անհրաժեշտ նյութատեխնիկական բազան
Առարկա՝	ՆԶՊ
Դպրոց՝	Երևանի Ս. Կապուտիկյանի անվան թիվ 145 հիմն. դպրոց
Ուսուցիչ՝	Էլոյան Էդուարդ Գագիկի
Վերապատրաստող՝	Եղիշե Ներսիսյան

ԵՐԵՎԱՆ 2023

Ներածություն

Թեմայի արդիականությունը:

Հայաստանը՝ աղետների առումով գտնվում է բարձր ռիսկային գոտում, որը լուրջ սպառնալիք է ազգաբնակչության և երկրի կայուն զարգացման համար: Աղետների ռիսկի նվազեցման և ուսումնական հատսատությունների արտակարգ իրավիճակներում գործելու կարողությունների զարգացումը կարևոր նախադրյալ է կրթության համակարգի անվտանգ գործունեության համար:

Դպրոցականների անվտանգության ապահովումը կարևորագույն հիմնախնդիր է: Մեր երկիրը 2015թ. միացել է Անվտանգ դպրոցների միջազգային նախաձեռնությանը, որն ուղղված է դպրոցների անվտանգության բարձրացմանը:

Անհատի անվտանգությունը մարդու պաշտպանվածության վիճակն է, վտանգավոր ներգործությունները զսպելու կամ հետ մղելու, ինչպես նաև հասցված վնասն արագ կերպով համակշռելու կարողությունը, կենսագործունեության կայունության ապահովումը և ինքնազարգացման հնարավորության ապահովումը: Անվտանգության պահանջմունքն իր մեջ ներառում է կայունություն, համակարգվածություն և վտանգող գործոններից, հիվանդություններից, վախերից և խառնաշփոթներից ազատվածության զգացողություն:

Դպրոցականի կյանքի անվտանգության տեսական հիմքը ներառում է.

-առաջացած խնդիրների լուծման համար անհրաժեշտ անվտանգության հայեցակարգային հենք՝ այս ոլորտում գործընթացների և երևույթների նկարագրություններով հանդերձ,

-տարբեր բնույթի վտանգների համապարփակ նկարագրման, վերլուծության և կանխատեսման մեթոդներ,

-բացասական և վտանգավոր գործոնների, երևույթների, գործընթացների և համակարգերի դասակարգում,

-անվտանգության պահանջներ տարբեր համակարգերի անձնակազմի և հասարակության գործունեության համար:

Անվտանգ կենսագործունեության մշակույթի ձևավորման և զարգացման չափանիշներն են՝

-անվտանգության մշակույթի դաստիարակությունը որպես մանկավարժական գործընթաց,

-կրթության համակարգում անվտանգության մշակույթի ուսուցման գործընթացի բարելավում,

-դպրոցի անվտանգության ապահովման համար տեխնոլոգիական պատրաստականության ձևավորումը, անվտանգ կյանքի պատրաստվածության բարելավման համար բարենպաստ պայմանների ստեղծումը և այլն:

Ուսումնասիրության նպատակը և խնդիրները: Թեմայի նպատակն է ուսումնասիրել և վերլուծել ՆԶՊ առարկայի նյութատեխնիկական բազայի ապահովման հիմնահարցերը հանրակրթական ուսումնական հաստատություններում: Հաշվի առնելով առաջադրված նպատակը՝ ձևակերպվել են հետևյալ խնդիրները.

1. ներկայացնել ՆԶՊ առարկայի դրվածքը հանրակրթական դպրոցում,
2. վերլուծել նյութատեխնիկական բազայի ապահովման ուղիները
3. Ուսումնասիրել նյութատեխնիկական բազայի ապահովող մարմինների իրավասությունները
4. ներկայացնել արդի կրթական միջավայրում նյութատեխնիկական բազայի ապահովման բարձրացման հնարավորությունները:

Հետազոտության առարկան: Սույն հետազոտության առարկա է հանդիսանում ՆԶՊ առարկայի նյութատեխնիկական բազայի ապահովումը:

Աշխատանքի կառուցվածքը: Աշխատանքը բաղկացած է ներածությունից, երեք գլխից, եզրակացությունից, օգտագործված գրականության ցանկից:

Գլուխ 1. «Անվտանգ կենսագործունեություն» առարկայի նկարագիրը և պահանջները ըստ նոր չափորոշիչի

Ռազմական գործը և զինվորական պատրաստությունը մարդկության պատմության ձևավորման հետ միասին սկսել է գոյություն ունենալ, իսկ «Նախնական զինվորական պատրաստություն»-ը, որպես առարկա մեր իրականության մեջ կյանքի է կոչվել 20-րդ դարի սկզբներին: «Նախնական զինվորական պատրաստություն» առարկան հնարավորություն է տալիս ձևավորելու մտածող, քաջ և հայրենիքի պաշտպանությանը պատրաստ քաղաքացի: Հանրակրթական դպրոցում «Նախնական զինվորական

պատրաստություն» առարկայի ուսումնական ծրագիրը կառուցվում է հիմնարար գաղափարների հենքի վրա պարուրաձև սկզբունքով՝ հիմնական դպրոցում սատացած գիտելիքները ընդլայնվում և խորացվում է ավագ դպրոցում:

Հիմնարար գաղափարների շուրջ «Նախնական զինվորական պատրաստություն» առարկայի ծրագրի կառուցումը հնարավորություն է ընձեռում արդյունավետ ապահովելու ներառարկայական և միջառարկայական կապերը՝ նպաստելով զինվորական պատրաստության, առաջին օգնության և անվտանգ կենսագործունեության հիմունքների վերաբերյալ համակարգային պատկերացումների ձևավորմանը: Տասնամյակների ընթացքում առարկայի անվանումը, բովանդակային որոշ կետեր փոփոխվել են, բայց 44-օրյա պատերազմից հետո չափորոշիչները հիմնովին վերանայելու խնդիր է դրվել:

Նոր սերնդի պատերազմներ, նորագույն զենքեր, վարժական նոր հնարքներ, ներառված են արդեն մշակված նոր չափորոշիչներում: Պատերազմից հետո պարզ դարձավ՝ անհրաժեշտություն կա փոխել ռազմագիտություն առարկայի բովանդակությունը, ուսուցման մեթոդներն ու մոտեցումները: Եթե նախկինում առարկայի ուսուցման 70%-ը տեսական նյութեր էին, ապա մշակված նոր չափորոշիչներով՝ առարկայի ուսուցման գերակշիռ մասն իրականացվելու է գործնական պարապմունքների միջոցով՝ կամ տվյալ դպրոցին կցված զորամասի տարածքում, կամ ռազմամարզական ճամբարներում:

Պատերազմը՝ որպես այդպիսին, որակապես լրիվ փոխվել է՝ մարտավարությունը, հնարքները, և պետք է ՆԶՊ առարկայի բովանդակային մասը փոխել ու այն ավելի արդիականացնել: Նոր ծրագրում նոր թեմաներ են ավելացվել, օրինակ՝ անօդաչու թռչող սարքերի դեմ պայքարի, մոբիլ ջոկատների մասին»:

Առարկայի ճիշտ և ժամանակին համընթաց նյութերով և գործնական պարապմունքներով ուսուցումը կարևոր է, թեպետ առարկան հայկական դպրոցներում նոր չէ: Նոր չափորոշիչները մշակելիս հաշվի է առնվել ոչ միայն հետխորհրդային երկրների փորձը, այլև ուսումնասիրվել են ԱՄՆ-ի ու Իսրայելի դպրոցների օրինակները՝ ռազմական կրթությունը ինչ նոր մեթոդներով է իրականացվում աշխարհում: Նոր ծրագրում 70% գործնական պարապմունքներ են: Թեմաները փոփոխվել են հիմնովին՝ դրանց նոր նշանակություն տալով: Օրինակ՝ մարտավարություն թեման նոր նախագծով կոչվում է մարտաֆիզիկական պատրաստվածություն, որն ամբողջովին հիմնված է գործնական պարապմունքների հիման վրա: Ռազմամարզական ճամբարներում աշակերտները պետք է լիովին տիրապետեն նորագույն պատերազմներում զինվորի տեղաշարժի

հնարքներին, նաև ռազմատեղագրության չափումներ պետք է իրականացնեն՝ ամբողջովին դաշտային պայմաններում, եթե գյուղական դպրոց է՝ հարմար տարածքում, եթե ոչ՝ կցված զորամասում կամ ռազմամարզական ճամբարում:

Ռազմագիտություն առարկայի՝ նոր չափորոշիչներով ուսուցումը նպատակ ունի տարիներ անց բանակում տեսնել արդեն իսկ գործնական և տեսական գիտելիքներ ունեցող զինվորների: «Նախնական զինվորական պատրաստություն» (ՆԶՊ) առարկայի նոր ուսումնական ծրագրում կատարված որակական փոփոխությունները պայմանավորված են ինչպես ռազմագիտության ոլորտում վերջին տասնամյակում տեղի ունեցած փոփոխություններով և իրավիճակային զարգացումներով, այնպես էլ ուսումնական գործընթացի առավել արդյունավետ կազմակերպման ձևով՝ օգտագործելով ուսուցման պարուրաձև և վեկտորային մոտեցումները, շարժվելով անհատական պատրաստվածությունից խմբային (ջոկային) պատրաստվածության:

Այստեղ առաջնային է ուսուցումը գործնական հիմքերի վրա դնելը, մարտական իրադրությունում և արտակարգ այլ իրավիճակներում անհրաժեշտ հմտությունների և կարողությունների ձեռքբերումը, աստիճանաբար հիմքային որակների ձևավորումից գործնական վարժանքներում դրանց կիրառումը: Կարևորվում է նաև միջառարկայական կապերի զարգացումը և ուսուցողական նյութերի պարզեցումը, ոչ պրոֆիլային թեմաներից ազատումը և արդիական ու կարևոր թեմաների ներմուծումը, ավելի արդյունավետ մեթոդական մոտեցումների, տեղեկատվական նոր տեխնոլոգիաների կիրառումը:

Հաշվի առնելով արդի ժամանակներում միջազգային և տարածաշրջանային զարգացումները և, դրա հետ կապված, այս առարկայի կարևորությունը, ինչպես և ստացած գիտելիքների՝ զինծառայության ընթացքում գործնական կիրառման հնարավորությունը՝ անհրաժեշտ է ուսուցման գործընթացի արդյունավետ համակարգի կիրառում ինչպես մեթոդաբանության, այնպես էլ ժամանակակից տեխնոլոգիաների (ուսուցողական նյութի դիտարժան ներկայացման տեխնիկական ու ծրագրային միջոցների) կիրառման տեսանկյունից: Որոշակիորեն կարող են կիրառվել ինչպես հարցադրումների միջոցով խնդիրների ներկայացումը, սովորողների մտածողության ակտիվացումը, նրանց մոտ հետաքրքրության առաջացումը կոնկրետ թեմայի և առարկայի վերաբերյալ, այնպես էլ սովորողների առանձին խմբերի միջև մրցակցության նախաձեռնումը, գիտելիքների ընկալման, յուրացման և ունակությունների դրսևորման ներքին շարժառիթների ստեղծումը: Առանձնահատուկ ուշադրություն է դարձվում գործնական վարժանքներին, քանի

որ մարտական իրավիճակում շատ կարևոր է զինվորի գործողությունների հղկումը՝ մինչև դրանց ինքնաբերաբար իրականացումը:

<<Անվտանգ կենսագործունեություն>> առարկայի ուսուցումը հանրակրթական ուսումնական հստատություններում

Դպրոցականների անվտանգության մշակույթի զարգացումը պետական ու հասարակական անվտանգության պահանջ է: Անվտանգության մշակույթի զարգացման քառանցքային կոմպետենցիաները մասնագիտական կրթական ծրագրերի չափորոշիչներ մշակող կառույցների համար պետք է դառնան առաջանցիկ ուղենիշ և արտահայտվեն կրթության վերջնարդյունքներում:



Սխեմա 1. Անվտանգության մշակույթի բաղկացուցիչները

Դպրոցականներին անվտանգության ապահովման և քաղաքացիական պաշտպանության պատրաստության գործընթացների ժամանակ կիրառվում են <<ձևավորում>>,<<կրթություն>>, <<Ուսուցում>>, <,Դաստիարակություն>> տերմինները: Ի. Ն. Նեմկովան հանգել է այն եզրակացության, որ <<կենսագործունեության անվտանգության մշակույթի ձևավորումը ներառում է կենսագործունեության անվտանգությունն ապահովող անձնային որակների և ընդունակությունների, գիտելիքների ու հմտությունների աճը, կայացումը, ինտեգրումը կենսագործունեության մեջ գործունեության ցանկացած ձևում անվտանգ ինքնիրացման հնարավորությունների բերող անձը իր ներքնաշխարհի ակտիվ որակական կերպափոխումը:

Անվտանգության մշակույթը որպես կրթական բովանդակության բաղադրիչ, ներառում է գիտելիքների համակարգ, գործունեության մեթոդներ, արժեքներ, նորմեր, անվտանգության կանոններ, որոնց հիմնական գործառույթը վնասակար և

վտանգավոր գործոնները կանխելու և նվազագույնի հասցնելու և անվտանգության սոցիալական գործոնները կիրառելու պատրաստականության ձևավորումն է:

Կրթության բովանդակության մեջ անվտանգության մշակույթը ներառում է անվտանգ ապրելու մասին գիտելիքներ, ըստ մոդելի անվտանգ ապրելակերպի փորձ, անվտանգության հիմնախնդիրները ստեղծագործաբար լուծելու կարողություններ, անվտանգ կյանքի արժեքներն ու իմաստները, ինքնազարգացումը անվտանգ կյանքի ապահովման հարցում, տեղեկատվությունը, հոգևոր գործունեության կառուցվածքային բաղադրիչները:

Ըստ Ս. Կանտինգտոնի դրան հասնելու առավել արդյունավետ ուղիներից մեկը համապատասխան մշակույթի ձևավորումն է որպես ցանկացած քաղաքակրթության գոյատևման և նույնականացման հիմք:

Այս տեսանկյունից կարևորվում է <<Անվտանգ կենսագործունեություն>> առարկայի ուսուցումը հանրակրթական ուսումնական հաստատություններում:

Հանրակրթական ուսումնական հաստատություններում <<Անվտանգ կենսագործունեություն>> առարկայի ուսուցման հիմնական նպատակներն են.

-դպրոցում կենսագործունեության նորմալ պայմանների ապահովում;

-հնարավոր մարդածին արտակարգ իրավիճակների կանխարգելում,

-անվտանգության ապահովման նկատմամբ հետաքրքրության մշտական պահպանում,

-դպրոցականների առողջության պահպանում,

-ուսումնառության և աշխատունակության համապատասխան մակարդակի պահպանում,

-յուրաքանչյուր դասարանում անվտանգ ուսման պայմանների ստեղծում,

-անվտանգության մշակույթի որակների և հատկությունների զարգացում, դրանց ներքին կայուն կոգեկերտվածքային ձևավորմամբ,

-ուսման ընթացքում և հետագայում կյանքի անվտանգության անհատական և սոցիալական իդեալների և արժեքների համակարգի ձևավորման գործողությունների դրդում,

-կյանքի անվտանգության ոլորտում կայուն անհատական և սոցիալական վարքի նորմերի ձևավորում:

<<Անվտանգ կենսագործունեություն>> առարկայի ուսուցման գործընթացում ուսուցիչը արդյունավետ կարող է աշխատել երկու ուղղություններով՝

1. Դպրոցականի անվտանգ պահվածքի դրդապատճառների ուսուցում,

2. Դպրոցականների մոտ վտանգի աղբյուրների և դրանց կանխարգելման և դրանց հաղթահարման միջոցների մասին գիտելիքների համակարգի ձևավորում, անվտանգ վարքի կոմպետենցիաների ձևավորում և այլն:

Ակնհայտ է, որ <<Անվտանգ կենսագործունեություն>> առարկայի ուսուցչի աշխատանքի որակը երկու երրորդով կախված է մաթեմատիկայի, պատմության, կենսաբանության, քիմիայի, աշխարհագրության, ֆիզիկայի, ֆիզկուլտուրայի ուսուցչի և այլնի կատարած աշխատանքի որակից: Իրոք, գրեթե յուրաքանչյուր դասի ժամանակ <<Անվտանգ կենսագործունեություն>> առարկայի ուսուցիչը հենվում է այս առարկաների աշակերտի կողմից նախկինում ձեռք բերած գիտելիքների վրա և դասերում հղկվում են նախկինում ձեռք բերված գիտելիքները՝ հիմնական շեշտը դնելով անվտանգության վրա, արտակարգ իրավիճակներում գոյատևման կանոնների վրա:

<<Անվտանգ կենսագործունեություն>> առարկայի ուսուցման մեջ պետք է ուշադրություն դարձնել առաջադեմ կրթական հետևյալ տեխնոլոգիաների կիրառմանը.

1. Պրոբլեմային-խնդրահարույց ուսուցման տեխնոլոգիաներ. Դպրոցականների ճանաչողական գործունեությանմոտիվացիայի հզոր աղբյուր է, նրանց մտածողության ակտիվացումն ու ուղղորդումը ուսուցման մեջ խնդրահարույց իրավիճակների ստեղծումն է, աշխատանքում պրոբլեմային-երկխոսական տեխնոլոգիայի կիրառումը, որն ապահովում է գիտելիքների ստեղծագործական յուրացում:
2. Տարբերակված կրթության տեխնոլոգիաներ: Ուսուցման բազմամակարդակ տարբերակումը կարող է կիրառվել ուսումնական գործընթացի տարբեր փուլերում՝ նոր նյութի ուսուցում, տարբերակված տնային աշխատանք՝ հաշվի առնելով գիտելիքները դասում, անցած նյութի յուրացման ընթացիկ ստուգում, համախմբման դասեր:
3. Խաղային տեխնոլոգիաներ.

-առարկայական խաղեր;
-դիդակտիկ խաղեր;
-դերային-սյուժետային խաղեր;
-ինտելեկտուալ խաղեր,
-ռազմական կիրառական խաղեր և այլն:

4. Ինտեգրված ուսուցման տեխնոլոգիաներ:

<<Անվտանգ կենսագործունեություն>> առարկայի գծով դպրոցականների առարկայական գիտելիքները կյանքի անվտանգության մասին, որոնք սովորել են այլ ակադեմիական առարկաների դասերից, ընդհանրացվում, համակարգվում, ուղղվում, լրացվում, կատարելագործվում և հիմք է հանդիսանում անվտանգ վարքի հմտությունների և սովորությունների ձևավորման համար: <<Անվտանգ կենսագործունեություն>> առարկայի դասընթացը նախատեսված է միավորել մասնավոր հիմնական գիտելիքները՝ միավորելով ֆիզիկան, քիմիան, կենսաբանությունը, աշխարհագրությունը, պատմությունը, էկոլոգիան և այլ առարկաները անվտանգության մեկ իմաստային բլոկի մեջ:

5. Հետազոտական գործունեության տեխնոլոգիա

Հետազոտական տեխնոլոգիան անհատականության վրա հիմնված տեխնոլոգիաներից մեկն է,դպրոցականի ինքնուրույն գործունեությունը կազմակերպելու, խնդրահարույց մոտեցման, խմբային մեթոդների, ռեֆլեքսիվ, ներկայացչական, հետազոտական, որոնման և դասավանդման այլ եմթոդների և միջոցների ինտեգրում:

6. Տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաներ:

Տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառմամբ դասեր տալը ուսուցման հզոր խթան է: Նման դասերի միջոցով ակտիվանում են սովորողների մտավոր գործընթացները՝ ընկալում, ուշադրություն, հիշողություն, մտածողություն և այլն:

7. Առողջապահական տեխնոլոգիաներ: Այս տեխնոլոգիաների նպատակն է աշակերտին հնարավորություն տալ պահպանել առողջությունը դպրոցում սովորելու ընթացքում, նրա մեջ ձևավորել առողջ ապրելակերպի համար անհրաժեշտ գիտելիքներ և հմտություններ, սովորեցնել նրան օգտագործել ստացած գիտելիքները առօրյա կյանքում:

Գլուխ 2. <<Անվտանգ կենսագործունեություն>> առարկայի նյութատեխնիկական բազայի ապահովումը

<<Անվտանգ կենսագործունեություն>> առարկայի ուսումնասիրության մեջ առաջատար դեր են խաղում նյութատեխնիկական բազան և ժամանակակից ուսումնական միջոցները: Դա պայմանավորված է այս առարկայի

առանձնահատկություններով և առաջին հերթին դրա բազմակողմանիությամբ և գործնական ուղղվածությամբ:

Նյութատեխնիկական բազան պետք է ստեղծել այնպես, որ դասընթացը նպաստի մոտիվացման առողջ ապրելակերպի, պատասխանատվության զգացման և անձնական անվտնագության հարցերի նկատմամբ գիտակցված վերաբերմունքի ձևավորմանը:

Հանրակրթական ուսումնական հաստատությունների <<Անվտանգ կենսագործունեություն>> առարկայի ուսուցման նյութատեխնիկական բազայի համալրումը նախատեսում է նյութատեխնիկական ապահովման երեք մակարդակ՝

1. Նվազագույն, որը նախատեսված է յուրաքանչյուր ուսումնական հաստատության որոշ միջոցների պարտադիր առկայության համար,
2. Օպտիմալ, երբ քաղաքի հիմնական դպրոցներում առա են <<Անվտանգ կենսագործունեություն>> առարկայի կաբինետները,
3. Հեռանկարային, համապատասխանում է հանրապետական, մարզային և համայնքային հիմնական ուսումնական հաստատություններում <<Անվտանգ կենսագործունեություն>> առարկայի կաբինետների առկայությանը:

<<Անվտանգ կենսագործունեություն>> առարկայի ուսուցման նյութատեխնիկական բազայի օրինակելի տարրերն են՝

-կահավորված ուսումնական կաբինետ,

-ռազմական և աշխատանքային փառքի թանգարան,

-մարզասրահ,

-վարժասրահ,

-հարթակ ձեռքի նռնակներ նետելու համար:

Լրացուցիչ տարրեր, որոնք բնորոշ են <<Անվտանգ կենսագործունեություն>> առարկայի բազային դպրոցներին.

-խոչընդոտների ունիվերսալ արգելագոտի,

-գոյատևման շերտի տարրերով պոլիգոն,

-ուսումնական հակաճառագայթային ապաստարան,

-հոգեբանական օգնության սենյակ:

<<Անվտանգ կենսագործունեություն>> առարկայի Քաղաքային ցուցադրական կենտրոն հանդիսացող դպրոցների համար բնորոշ են հետևյալ լրացուցիչ տարրերը՝

-հրդեհաշիջման փորձարկման տեղամաս,

-ճանապարհային կանոնների յուրացման հարթակ,

-բնական աղետների և տեխնածին վթարների դեպքում գոյատևման կանոնների կիրառման հարթակ,

-շարային հրապարակ:

<<Անվտանգ կենսագործունեություն>> առարկայի վերաբերյալ ուսումնասիրված նյութի յուրացման որակը զգալիորեն աճում է, եթե ուսումնական գործընթացում լիարժեք օգտագործվեն նյութական բազայի բոլոր տարրերը և ուսուցման նյութատեխնիկական միջոցները: Առաջատար դեր է պատկանում դպրոցականի գործնական գործունեությանը, որի մեջ մասն պետք է իրականացվի հատուկ սարքավորված դասասենյակներում:

<<Անվտանգ կենսագործունեություն>> առարկայի կաբինետին ներկայացվում են հետևյալ ընդհանուր պահանջները՝

-համապատասխանում են ուսուցման բովանդակությանը,

-համապատասխանում են սանիտարահիգիենիկ չափանիշներին,

-հագեցած են համապատասխան սարքավորումներով, տեսալսողական միջոցներով, համակարգիչներով, գույքով,

-հարմարավետ են դասերի համար,

-տեխնիկական ուսումնական միջոցների օգատգործման լայն հնարավորություն,

-նպաստում են դասարանում ոչ միայն կրթական, այլև դաստիարակչական խնդիրների լուծմանը,

-ապահովում են առավելագույն դիտողականություն,

-պարունակում են ուսումնական և տեսողական նյութեր ինքնուրույն առաջադրանքներ կատարելու համար,

-պետք է լինի լուսավոր և չոր: Նրա համարհանրակրթական հաստատության նկուղ կամ կիսանկուղ հատկացնելն անընդունելի է:

Կաբինետում տեղավորվում են տարբեր սարքավորումներ, որոնք անհրաժեշտ են դասընթացի բաժինների և թեմաների վերաբերյալ տեսական և գործնական վարժությունների համար:

Ուսումնական գործընթացում լայնորեն կիրառվում են ուսումնական տեսանյութերը, ինչպիսիք են՝ <<Իմացիր և կարողացիր, <<Ծառայում եմ Հայրենիքին>>, <<Փրկարար ծառայություն>> և այլն: Դասասենյակը կարող է ունենալ նաև մեկ սենյակ՝ տեսական պարապմունքների և ուսումնական ու մեկ լաբորատոր սենյակ՝ գործնական աշխատանքների համար:

Ուսումնական գրականությունը, լուսանկարները, սարքավորումների նմուշները, փրկարարական գոքրծիքների նմուշները տեղադրվում են դարակաշարերի, պատի ցուցափեղկերի վրա և այլն:

Սովորողների «<<Անվտանգ կենսագործունեություն>> առարկայի անցկացման համար նյութատեխնիկական բազան ապահովում են Հայաստանի Հանրապետության պաշտպանության, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության, այլ շահագրգիռ նախարարությունները և գերատեսչությունները, որոնց ենթակայության տակ գտնվում են ուսումնական հաստատությունները՝

1) Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարությունը՝ ուսումնական զենքով, ռազմամթերքով, փոքր տրամաչափի հրացաններով և նրանց փամփուշտներով՝ «Զենքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով և նրանից բխող իրավական ակտերով սահմանված կարգով,

2) Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարությունը՝ բժշկական գիտելիքների ուսուցման համար անհրաժեշտ ուսումնամեթոդական պարագաներով,

3) Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարությունը՝ քաղաքացիական պաշտպանության ուսումնական գույքով, պաշտպանական անհատական միջոցներով, ճառագայթային և քիմիական հետազոտության սարքերով:

<<Անվտանգ կենսագործունեություն>> առարկայի ծրագրի պահանջներին համապատասխան յուրաքանչյուր ուսումնական հաստատությունում ստեղծվում է ուսումնական նյութատեխնիկական բազա, որն անընդհատ կատարելագործվում և համալրվում է: <<Անվտանգ կենսագործունեություն>> առարկայի նյութատեխնիկական բազան ընդգրկում է՝

1) հատուկ կահավորված դասասենյակ, որն օգտագործվում է միայն <<Անվտանգ կենսագործունեություն>> առարկայի անցկացման համար,

2) ուսումնական զենքն ու ռազմամթերքը, փոքր տրամաչափի հրացանները, դրանք պահելու համար կահավորված զենքի պահպանման սենյակը, Ուսումնական զենքի, ռազմամթերքի, փոքր տրամաչափի հրացանների և նրանց փամփուշտների ստացումը, հաշվառումը և պահպանումը «Զենքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով և նրանից բխող իրավական ակտերով սահմանված կարգով:

Ուսումնական զենքի անհրաժեշտ քանակության հաշվառումը կատարում է Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարությունը:

Գլուխ 3. <<Անվտանգ կենսագործունեություն>> առարկայի նյութատեխնիկական բազայի ապահովման առկա խնդիրները

Իր վրա դրված գործառույթները լիարժեք իրականացնելու համար զինղեկին անհրաժեշտ է հարուստ ուսումնանյութական բազա: Շատ դպրոցներում այն բավականին թերի է: Վիճակը բարվոք է, թերևս, միայն ուսումնական զենքի մասով: Օրինակ՝ 2000թ. զենքով ապահովվածությունը ողջ հանրապետությունում կազմել է 15 տոկոս, 2021թ այդ ցուցանիշն արդեն 80 տոկոսից ավելի էր: Կան մարզեր, որտեղ բոլոր դպրոցներն ունեն ուսումնական զենքեր: Նշենք, որ դրանց բացակայությունը հիմնականում պայմանավորված է օբյեկտիվ պատճառներով: Ցանկացած դպրոցի համար ուսումնական զենքի ստացման առաջնահերթ պայմանը համապատասխան տարածքի առկայությունն է: Այն պետք է պահվի անվտանգության ազդանշանային համակարգով համալրված հատուկ սենյակում ճաղավանդակների ետևում:

Անհրաժեշտ պահանջները բավարարելու դեպքում դպրոցից ստացված հայտը արագ ուսումնասիրվում է, և գործին ընթացք է տրվում: Ոստիկանությունը տվյալ հարցում հիմնական պատասխանատու է համարում դպրոցների տնօրեններին և զինղեկներին, որոնց անմիջական նախաձեռնությամբ էլ այդ սենյակները պետք է կահավորվեն: Գործող չափանիշներին համապատասխանելու դեպքում դպրոցները 100 տոկոսով կարող են ապահովվել ուսումնական զենքով: Հավելենք, որ ամառային արձակուրդների ընթացքում զենքերը դպրոցի տնօրենի դիմումի հիման վրա հավաքվում և պահվում են ոստիկանական բաժանմունքների զինանոցներում՝ անցանկալի միջադեպերից խուսափելու համար: Դպրոցին անհրաժեշտ են ոչ միայն ՆԶՊ առարկայի դասավանդման, այլև ընդհանուր ռազմահայրենասիրական դաստիարակության համար անհրաժեշտ ուսումնական նյութեր: Առաջին հերթին դա <<Անվտանգ կենսագործունեություն>> առարկայի դասագիրքն է:

Դասագրքերից պակաս կարևոր չեն ուսումնական պաստառները, ցուցադրական-տեղեկատվական նյութերը, որոնք հիմնականում տրամադրում է Կրթության ազգային ինստիտուտը:

Սկզբնապես թվում է, թե այս հարցում ամեն ինչ կարգին է՝ դպրոցների պատերին ՀՀ ազգային հերոսների նկարներ են, մեր պատմության, մշակույթի, կրոնի, հիշարժան տարեթվերի մասին պատմող ուսուցողական նյութեր, ՆԶՊ դասասենյակներում առկա են ՀՀ զինված ուժերի կառուցվածքը, մարտական տեխնիկան և սպառազինությունը նկարագրող պաստառներ: Լավ կլիներ, որ բոլոր դպրոցներին տրամադրվեին միանման գունավոր մեծ պաստառներ՝ առանց հաշվի առնելու աշակերտների թիվը և դրանից բխող դպրոցի բյուջեի մեծությունը: Այնպիսի պաստառներ, որ միանգամից հնարավորություն տային ծանոթանալու ինքնաձիգի մեխանիզմի աշխատանքին, կրակի վարման տեղամասերին և այլն: Դասավանդման ընթացքում զինղեկները ցանկանում են լայնորեն կիրառել նաև տեսաֆիլմեր, պաշտոնական տեղեկատվություն:

Այս առումով զարգացումը նույնպես լիարժեք չէ: Մի շարք դպրոցներում կան տեսապրոյեկտորներ: Դրանց մի մասը, ինչպես նաև զինված ուժերի, ազգային հերոսների և այլ թեմաներով տեսաֆիլմեր տրամադրել է պաշտպանության նախարարությունը, մի մասը գնվել է դպրոցների բյուջեի հաշվին: Պահանջների ամբողջական բավարարումից վիճակը դեռ հեռու է, քանի որ գործընթացը բավական ծախսատար է և ժամանակատար: Այս ուղղությունը երևի թե առավել մեծ ուշադրության կարիք ունի, քանի որ երեխաների տեսողական ընկալումն ավելի ուժեղ է: Բոլոր ցուցադրություններից, տեսողական և պատմողական ուսուցումից ավելի մեծ է գործնական պարապմունքների նշանակությունը: Աշակերտները սովորում են ուսումնական զենք քանդել-հավաքել, լիցքավորել, հակագազ հագնել, իրենց ձեռքում բռնում են ուսումնական նռնականետ, ական, այլ հմտություններ են ստանում:

Ճիշտ է, հիմնական դպրոցում աշակերտները կրակում են միայն օդամղիչ հրացաններով, միայն ավագ դպրոցի աշակերտներն են զորամասերի հրաձգարաններում մարտական զենքից կրակում: Բայց նույնիսկ օդամղիչ հրացանների դեպքում են խնդիրներ առաջանում: Նախևառաջ ոչ բոլոր դպրոցներն ունեն համապատասխան հրաձգարաններ: Օգտագործվում են հարմարեցված տարածքները:

Օդամղիչ հրացանների համար էլ փամփուշտները կենտրոնացված կարգով չեն ստացվում: Հրաձգության առումով վիճակն առավել քան բարվոք է այն դպրոցներում, որոնցում տեղադրված է ինքնաձիգից կրակի վարման ավտոմատ

վարժասարք: Այն ապահովում է բնականին մոտ պատկեր, կրակի վարման պայմաններ՝ գործնականում լիարժեք նախապատրաստելով ապագա զինվորներին: Դպրոցների շարահրապարակներում և մարզադահլիճներում պարապմունքներ անցկացնելը նույնպես երբեմն դժվարանում է: Ուսումնական նռնակի նետում, ֆիզիկական, շարային պատրաստություն և այլն, գործողություններ են, որոնք պետք է իրականացվեն միայն համապատասխան բաց տարածքում, դասասենյակներից դուրս: Իսկ դպրոցներ կան, որ այդպիսի պայմաններ չունեն: Օրինակ՝ դպրոցում շարահրապարակն ինքնին առկա է, սակայն անմխիթար վիճակում է: Ասֆալտի ծածկույթն հին է, գծանշումների չկա, ձգումների պտտաձող առկա չէ և այլն:

Եզրակացություն

Այսպիսով, եթե մարդկությունը և պետությունները տարերային և սոցիածին աղետներին դիմակայելու համար ունեն բավական ժամանակ՝ նույնիսկ տասնյակ և հարյուրավոր տարիներ, ապա տեխնածին աղետների դեպքում այդ ժամանակը շատ կարճ է: Այդ աղետները պայմանավորված են արդյունաբերության, գիտության, ռազմական տեխնիկայի, տրանսպորտային միջոցների, երկրի ընդերքի շահագործմամբ և զարգացմամբ:

Մարդկությունը և պետությունները չունեն բավարար քանակության միջոցներ և ժամանակ՝ նշված ոլորտներում վերահաս վտանգներին հակազդելու համար: Այս տեսանկյունից կարևորում եմ <<Անվտանգ կենսագործունեություն>> առարկայի ուսուցումը դպրոցներում և հանրակրթական ուսումնական հաստատություններում, ինչպես նաև ուսումնական նյութատեխնիկական բազայի առկայությունը:

Ուսումնական հաստատության սովորողների տեսական գիտելիքներն առավելագույնս յուրացնելու համար կարևորում եմ այդ գիտելիքները գործնական պարապմունքներով ամրապնդելը: Մասնավորապես՝ համաձայն օբյեկտի ՔՊ և ԱՌՆ պլանների տարհանման, պատսպարման կազմակերպումը, անհատական պաշտպանության միջոցներից օգտվել կարողանալը:

Երևանի Ս. Կապուտիկյանի անվան թիվ 145 հիմնական դպրոցը նշված խնդիրների լուծումն իրականացնում է՝ օգտագործելով դպրոցի կիսանկուղային հարկի և հրաձգարանի տարածքները: Ընդ որում այդ տարածքները պայմանականորեն բաժանված են հատվածների՝ յուրաքանչյուրը 25-50 աշակերտի համար, իսկ պատերին փակցված են համապատասխան դասարանների ինդեքսները:

Ինչ վերաբերում է դպրոցի նյութատեխնիկական բազային՝ այն ունի համալրման կարիք: Առկա են՝

1 լրակազմ քիմիական համազորային հետախուզական սարք,

1 լրակազմ ճառագայթային բաժնեչափման սարք,

2 պատգարակ,

30 ժամկետանց հակագազ,

1 հրշեջ վահանակ

15 կրակմարիչ

1 արյունահոսության դադարեցման լարան,

2 դեղարկղ, վերջույթների անշարժացման պարագաներ, բինտ և հականեխիչ:

Գործնական պարապմունքների ժամանակ օգտագործվում են ձեռքի տակ եղած միջոցներ՝ եռանկյուն գլխաշոր, ուղիղ փայտ, պոլիէթիլենային տարաներ և այլն:

Օգտագործված գրականության ցանկ

1. «Նախնական զինվորական պատրաստություն» առարկայի փորձնական չափորոշիչ և ծրագրեր (8-12-րդ դասարաններ), Երևան 2021
2. <<Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության մասին>> ՀՀ օրենքը: ՀՕ-265,1998:
3. Абаскалова Н. П. Теория и методика обучения безопасности жизнедеятельности, Н., 2008, 135с.
4. С. Хантингтон. Столкновение цивилизацией; 20.01.2007.
5. Мошкин В. Н. Воспитание культуры безопасности школьников: Монография, Барнаул, 2002, 318с.